

նորոգներն, բարձրագոյն ուսում ստացածներն անընդունակութիւնը, նրանց տգիտութիւնը, որ և է աշխատանքին նրանց անսովոր լինելը, վերջապէս նրանց կատարեալ դարգակութիւնը:

Համալսարանական մասի ներկայացուցիչները մեզանում ի հարկէ, սրտի խորքից կատեն այն լքրապիրը, որ հանեց նրանց երեսից կեղծաւոր դիմակը, մերկացրեց նրանց, ոչնչացրեց նրանց չորս կողմ եղած շինծու փայլը:

Այդ պատճառով մենք միայն ձեզ ենք դիմում և ձեզ վրա միայն յոյս ունենք, հայ հասարակութեան միջին դաս, մանր վաճառականներ, գործակատարներ, բաժանաներ, ուսուցիչներ, մանր աստիճանաւորներ, գրագէտ գիւղացիներ և արուեստաւորներ և դուք ամեն դասակարգի հայ կանայք, դուք որ դեռ ևս պահպանել էք ձեր մէջ արդարութեան նուրբ և մաքուր զգացմունքը, ձեզ ենք դիմում խնդրելով որ պահպանեք «Մըշակը»:

Մեր լրագիրը պահպանելու մէջ մենք միմիայն մեր հասարակութեան միջին դասի վրա յոյս ունենք, որովհետեւ մենք այդ միջին դասը մեր հասարակութեան ամենաազնիւ դասն ենք համարում և միշտ անկեղծ կերպով պաշտպանել ենք նրա շահերը:

Մեզ համար և առհասարակ

հայերիս մէջ ամեն նոր, առաջադէմ, օգտակար գործի համար, այն հայը որ բարձրագոյն ուսում է ստացել, նա կատարելապէս կորած է, որովհետեւ հայը միայն այն ժամանակ անտարբեր չէ մնում դէպի ազգային մի որ և է բարոյական և մտաւոր շարժում մինչև որ նա համալսարանում իր ուսումը չէ աւարտել... Բայց հէնց որ նա համալսարանական ուսում ունի, նա այնուհետեւ կորած է լինում ազգի մտաւոր և բարոյական կեանքի համար...

Համալսարանականը մտածում է միմիայն իր փորի վրա և կատարելապէս ետական է դառնում:

Մեր համալսարանականները գիտեն, որ հայոց հասարակութեան մի մաս կարող է միմիայն կարգաւ հայերէն լեզուով, ուրեմն ժողովրդի այդ մասի համար հարկաւոր է հայերէն ամենօրեայ թերթ: Ուրեմն թող իրանք բարձր ուսում ստացածները չը կարգային այդ թերթը, որովհետեւ իրանք ամեն քան դիտեն և մի հայոց լրագրից նոր բան սովորել չեն կարող, բայց գոնէ թող գրվէին լրագրին, որ այդպիսով միջոց տային լրագրին պահպանվելու և ուրեմն ուրիշ կողմից միջոց տային հայոց հասարակութեան այն մասին, որ բացի հայերէնից ուրիշ լեզու չը գիտէ, ու-

նենալ ընթերցանութեան մի թերթ:

Բայց ի հարկէ այդ շահաւէտ է համալսարանականներին՝ պահպանել մի թերթ, որ անդադար մտրակում է նրանց և մերկացնում է նրանց ժողովրդի առջև...

Եւ յանկարծ այն մարդիկ, որոնց հեղինակութիւնը ժողովուրդը կոյր կերպով պաշտում էր, յայտնիեցան տգէտ, անուս, ծոյլ, անգործ, անկիրթ, ետական, շահասէր, հարստահարող և թշնամի ժողովրդի ամեն տեսակ առաջադիմութեան...

Ուրեմն համալսարանականներին էլ հարկաւոր է ունենալ իրանց սեփական օրգան, որի օգնութեամբ նրանք կարող էին մոլորեցնել միսմիտ ամբօխը...

Բայց այդ տեսակ օրգան հիմնելու համար, հաւատացէք, որ նրանք իրանք իրանց գրպանից մի կօպէկ չեն տայ, չեն ծածկի լրագրի գէֆիցիտը, որ կարող է ամեն տարի հասնել հազարների, — այլ նոյն խել ժողովրդից կը գլխեն նրա փողերը, նրա փողերով իրանց անձը փառաբանելու նպատակով մի օրգան կը հիմնեն, և ժողովրդից դուրս գլխած փողով ժողովրդին կը մոլորեցնեն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Կենդանիների հովանաւորութեան թիֆլիսի ընկերութեան անդամները հրաւիրում են. 1) Ներկայ գտնվել ընդհանուր ժողովին յունվարի 20-ին, երեկոյան 7 ժամին Գիւղատնտեսական ընկերութեան բնակարանի մէջ, որ գտնվում է Բարխաթնոսկայա փողոցի վրա, Ալեքսանդրեան այգիում: Կարող են ներկայ գտնվել նոյնպէս գործով հետաքրքրվող մասնաւոր անձինք: 2) Վճարել անդամական տուրքը ընկերութեան դանձապահ պ. Կատամովին իր առևտրական տան մէջ փոստային երկրորդ փողոցի վրա, Ալեքսանդրեան այգու գիմացը, թուամսով տանը ամեն օր առաւօտան 9—12 ժամը:

Ա.Լ.ԲԱՍՆԻՎԱՊՈԼԻՑ մեզ գրում են. «Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ առաջիկա դարձանամ տնին կառավարութեան թղթատուութեամբ 25,000 պոլդաչի գրոնն սիտի բաժանվի թագաւորական ամբարներից մեր չքաւոր երկրագործներին ցանկու համար»:

Մեզ գրում են Ա.Լ.ԲԱՍՆԻՎԱՊՈԼԻՑ. «Այստեղ սարսափելի ցրտեր են անում: Մեր ձերերը գոնեա այսպիսի ցուրտ ձմեռ չատ քիչ են յիշում: Թանդութիւնը անտանելի է: Մեր քաղաքը օրստօրէ չքաւորութեան կերպարանքն է ստանում: Ալիւրի պուրը վերջին ժամանակները բարձրացաւ մինչև 3 ռ. 40 կ.: Հաւանական է, որ աւելի թանկանայ»:

Գ. օգիտաւ եղբայրների ֆրանսիական ցիրկում թիֆլիսի ընկերութեան արդէն մի քանի անգամ ներկայացրին «Գայթակղեցող դև» ֆանտաստիկան նշանախաղ—պարսիազգը, որ կազմված է պ. Կրիսկուօյ պարող արտիստից: Պարսիազգը կրկնվելու է չորս քանիստ 19-ին:

Ա.Լ.ԲԱՍՆԻՎԱՊՈԼԻՑ մեզ հաղորդում են, որ ներկայ 1880 թուականին տեղական ընթերցարանը ստանալու է՝ Մշակ, Մեղու, Մանկավարժական թերթ, փարոս Հայաստանի, Тифл. Вѣст., Кавказъ, Русскій Курьеръ, Живописное обозрѣніе, Всем. Иллюстрація, Стрекоза, Недѣля, Свѣтъ и Тѣни и Мірской Толкѣ, Вѣстн. Евр. и Отеч. Записки: Հիմնադիր անդամները բացի միանուագ վճարած 10 ռուբլուց, վճարում են նոյնքան, որքան միւս ընթերցող անդամները, այն է ամսական 30 կօպ:

փելով բոլանց և արշինանոց քանոնը թիֆլիսի կենդանիների հովանաւորութեան ընկերութեան անդամները հրաւիրում են. 1) Ներկայ գտնվել ընդհանուր ժողովին յունվարի 20-ին, երեկոյան 7 ժամին Գիւղատնտեսական ընկերութեան բնակարանի մէջ, որ գտնվում է Բարխաթնոսկայա փողոցի վրա, Ալեքսանդրեան այգիում: Կարող են ներկայ գտնվել նոյնպէս գործով հետաքրքրվող մասնաւոր անձինք: 2) Վճարել անդամական տուրքը ընկերութեան դանձապահ պ. Կատամովին իր առևտրական տան մէջ փոստային երկրորդ փողոցի վրա, Ալեքսանդրեան այգու գիմացը, թուամսով տանը ամեն օր առաւօտան 9—12 ժամը:

—Նու, թաքար րոնք տեսնեմ:

—Փո. է, վէ, րէ...

—Չէ դու, չեղաւ, կրկին կատաղեց վարժապետը և մէկի երկար մազերից բռնած դուրս չի գնաց, մի քանի իզգալի բռնեց և խնդրեց քանակին կաշնելով:

Այն նրան, ով որ մի մաղաչակ կը սխալվեր, իսկոյն մազերից բռնած պատկապտ կը տար: Գլուխ կտորէր, աչք կպապայնէր, ամբողջ օրով չարացնել անյիշելի բաւերով հայոցն՝ սովորական բաներ էր մեր վարժապետի համար:—Նշէ անէին խնդ աշակերտները. դուրս գնալու հար չը կար, որովհետեւ թէ տարեկան մտնողը և թէ թուակը կանխիկ էին վճարել, մանաւանդ առանց ձայնագրութեան քանանայ ձեռնադրուիլը անկարելի էր. ուրեմն պիտի համբերէին, ուրիշ հար չը կար:

Մի օր երբ որ այսպիսի արհամարհանութեամբ հիպոտախառն ձայնագրութիւն էին ստիպում, ներս մտաւ դպրոցի տեսուչը, որի մասին մի համառօտ տեղեկութիւն տալու համար աւելորդ չի լինի ասել որ նա (տեսուչը) ընդունակ էր միայն առաջակութեան, դոգմութեան և քսութեան մէջ: Մինչև այսօր էլ նա իր արհամարհան երկասցիի դաշունը անդադուն էր պահում իրանից: Թէ դրել և թէ կարգաւ այնքան գիտէր որ կարողանում էր վաճարել եւ մեծ տուրք գրել և ամէն ամիս հաշիւ ներկայացնել իրանից մեծ տուլիւն: Հա էն էի ասում, ներս մտաւ դաշտաւոր տեսուչը և ուղղակի հրամայեց,

վարժապետ, երկու աշակերտ այսօր ուղարկիր թող վաճարի չալիւր հնձն, երկու աշակերտ էլ ուղարկիր որ հայաթը, դռները լաւ մաքրեն այս մարդին էլ մի վկայական տուր թէ ձայնագրու-

թիւնը աւարտել է, թող գնայ տէր տէր դառնայ:

—Վերջին առաջարկութիւնը դուր չեկաւ մեզ վաղուց ծանօթ վարժապետ Պետրովին, այդ պատճառով մի քիչ այլապէս հարցրեց մեծապատիւ տեսուչից:

—Ո՞վ է այդ մարդը, ես դրան ամենեւին դաս չեմ տուել, ինչպէս վկայական տամ:

—Ո՞վ կըլի, կըլի. քու ինչ բանդ է. քեզ ինչ ասում են, լսիր:

—Հի, էի բերանդ քաղցրացել է հաւ:

—Իդ քու գործդ չի, քեզ փող ենք տալիս, ինչ ասում ենք արա, պատասխանատուն մենք ենք:

—Չէ, եղբայր, ես էդ բանը չեմ կարա անել, գնա, ինչ որ առել ես դրանից, բեր կիսներ, ես էլ վկայական տամ:

—Հէջ մի կօպէկ էլ չեմ տամ որ աչքդ կօխես, քեզ ասում են վկայական տուր, եթէ ոչ, դուրս այստեղից:

Այստեղ երկուսի էլ համբերութիւնը հատաւ. վարժապետ ու տեսուչ սղուղեցան իրար ու օղբերմը, վեր ընկան յատակի վրա: Պատերազմը սաստկացաւ. տեսուչը դաշտը քաշեց, աշակերտները երկու կուսակցութեան բաժանվեցին: Պատերազմը զարնուրդի էր, վարժապետի ճակատից մի կարմիր աղբիւր էր դուրս գալիս. տեսչի քիթը ու պոչընկը ջրաթուղծ էր: Գիւղի բնակիչների միջամտութեամբ պատերազմը վերջացաւ, բայց պատերազմի դաշտում մի չարախից աւելի դեռ երևում էին քանանայացուների միտքների մաղերը. քանոնների և թանաքամանների կտորներ:

Անցկացաւ հինգ օր: Մեծ տեսուչը եկաւ քննութեան. տեսուչը արդարացաւ: Վարժապետ Պետրովին, որպէս յանցաւոր, իր չուր ու փախուր հաւաքեց, վաճարի պարտից դուրս ելաւ ու անյայտացաւ:

V.

Անց կացաւ երեք տարի: 18... թուականն էր: Ալիւրեան գետից դէպի արևմուտք բոլոր դաշ-

տերը մարդկեղէն անտառ էր դառել. զարնուրդի պատերազմ էր: Հրացանների ճոճօցը, թնդանոթների զոռօցը, կառքերի զլլթիւնը, բազմութեան խառնիճաղանջ աղմուկը, երկարների խրինճոցը, վիրաւորակների վայն ու աւաղան խառնուելով միմեանց հետ հողային գունտը մարդի ոտքերի տակ զղրղայնում էին: Փողը հեղեղի պէս թափւում էր ամեն տեսակ աշխատաւորի գլխին: Որտեղ մի թոկից փախած կար, դուքան էր բացել ու փող էր աշխատում: Այս ժամանակ մի նոր նուաճած քաղաքի խուլ փողոցներից միում գտնվում էր մի գինեւոճ, որի վերմեանդ երկրպագուները ինչ անտակ անկարգութիւն, աւազակութիւն և անբարոյականութիւն ասես որ չէին գործում այդ անիծեալ տան մէջ: Գինեւոճն կառաւարչին առաջին անգամ տեսնողը կը կարծէր թէ մի չափաւոր կամ մի աւազակ է: Լաւ նուրբ ուշադրութիւն պէտք է դրացնէիր որ կարողանայի ճանաչել մեր Պետրովին որ պատերազմի յաջող հանգամանքներից օգուտ քաղելով ինքն էլ է սկսել միկիտանջութիւն անել: Տիրացու Պետրովին կարմիր աղուղը լատիկ արխաւուղի վրա առաջը կապած, թնեղ կիսն հետ քշած, մի դրաւ կօնի ձին շտիկայ գլուխը անցկացրած, ոտից մինչև դուխը զանազան տեսակ կեղտերով օծուած, այծի նման թռչկոտում էր և հազիւ էր կարողանում իր բազմաթիւ մուշտարիներու դանաղած տեսակ պահանջները կատարել: Խնդո մի րօպէ ժամանակ չունէ, հանգստանալու, Տիրացու Պետրովին ոչ միայն 10 կօպէկի բանը 10 չաճու էր վաճառում, այլ՝ փող աշխատելու համար հարազատութիւններ էլ էր գործ դնում. օրինակ նա մի վեղբայր գինու հետ երկու վեղբայր էր խառնում և վաճառում խնդ մուշտարի. քու վրա Մի դղալ թէյի հետ նա խառնում էր իր պատրաստած ներկը և 40—50 սաղաւթ ճանապարհ էր քցում: Առանց խաղախութեան նա ոչինչ էր վաճառում: Անցկացաւ մի տարի: Պատերազմը վերջացաւ: Օտարականները քաշվեցան: